МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«17» Հունվար 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար «Շինանյութի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-24/05» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ 04247795, հեռ.՝ 098525529, էլ. հասցե՝ shahinyanmurad@mail.ru) կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.3-ում (իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև) նշված 100 տոկոս բաժնետեր Մուրադ Շահինյանը հանդիսանում է «ԳԱԳ-ՄԱՐԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում (ՀՎՀՀ 04239009) 100 տոկոս բաժնետեր, և վերջինս 2023 թվականի սեպտեմբերի 5-ից ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ և 121-րդ կետով՝ «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, քանի որ «ԳԱԳ-ՄԱՐԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելը ինքնաբերաբար հանգեցնում է «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, որոշեցի՝

1. «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և Մասնակցին տրամադրելու օրվանից:

3. Որոշումը կայացվելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Ստորև ներկայացնում եմ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու փաստը հավաստող տեղեկատվությունը.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/	Գործու նեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրա տուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման, ընթացա կարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտա վորությունը, որը հանգեցրել է պատվիրա տուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմա նագիր կնքելու իրավունքից	
«ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ» ՍՊԸ	04247795	Վեդի, Կասյան, շ. 26/9, բն.16	V			Որոշման ամսաթիվը՝ 17.05.2024թ., Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-24/05»

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի
գլխավոր մասնագետ Մելինե Սողոյան հեռ. 060 38-00-40, 077 19-80-99